


ՎԵՍՏԵԱՆ ԿՈՑՍ

Պ Ա Տ Մ Ո Վ Ա Ն Վ. Է Պ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց Ա. Ռ. Ա. Զ Ի Ն Գ Ա. Ր Ո Ի

(Տես յ'էջ 463)



ԳՂՈՒԽ Ը

Կ Ո Ի Ռ Ն Ե Լ Ի Ա



ՄԵԻՐ զեռ նոր կը բարձրանար հորիզոնին վրայ, և փոքրիկ թրուչուններն իրենց առաւօտեան զայլալիկներով կը շնչեցնէին վեհասայի տաճարը: Ելաւ հուռնելիա, նախընթաց օրուան մէջ ունեցած յուզմանց պատճառաւ զիշերն անքուն անցունելէն յոգնած:

Դէմքը աժգոյն, աչերը նուազկտա, անտառակը գնաց փաբիոյան փնտռելու, իբր միակ սիրած անձը, որովհետեւ տաճարին մէջ միայն այն էր իւր սրտակիցը, իսկ տաճարէն դուրս Գոմիտիլլա և Փլորոնիա. բայց առ առաջինն աւելի յարգանք կը տածէր քան թէ սէր. երկրորդն՝ իւր մանկութեան մէկ քաղցր ժամանակը կ'արթնցնէր իւր սրբոտին մէջ, աւելի ոչինչ: Իւր ազգականներն 'ի վաղուց մեռած էին, և Սեքստոս Սաբինոս՝ որ իւր ընտանեաց վերջինն անցորդն էր՝ շատ քիչ կո գար զինքը տեսնելու:

Մեծ զգայնութեան տէր սրտերն, ինչպէս էր իւրն, որ չեն կրնար ցուցընել ուրիշի մը ունեցած գորոմին, շատ կը նեղուին, եթէ չի վերանան առ Աստուած՝ ապկից կը բղիւնամէն սուրբ զգացում, ծարաւնին անցունելու համար սիրոյ այնպիսի աղբիւրէ մի, ուր ապերախտութիւն, յուսախարտութիւն և անհաստատութիւն բնաւ չեն խառնուած:

Եղովն որ հուռնելիա այս գերբնական երջանկութիւնը չէր կրնար զգալ, որովհետեւ կոպապատութիւնն ամենասիրուն զգացումները նիւթականացնելով, հոգին երկրիս կը զօղէ անխզելի կապերով:

Մեռելական լուծեան մէջ՝ իւր սրտին պարապը լեցընելու համար, շատ անգամ հուռնելիա ասոց մի կ'ընտրէր, կը կապուէր անոր և կը խօսէր խանդավառ և հրաբորբոք սրտի մի խորհրդաւոր լեզուով. և եթէ ամպ մի ծածկէր զայն, ջրային անհամբերութեամբ կը սպասէր անոր փարատելուն: Ուրիշ անգամ պարզ մայրի ծաղիկ մի կ'ընտրէր, կը սիրէր զայն, շուր կու տար անոր ամէն օր. և երբ թառամէր այն, լալով կը ժողվէր անոր չորացած թերթիկները. 'էք կոյս, ինձ ծաղիկ: Բայց փաբիոսայի հասնելէն վերջ՝ հուռնելիա աւելի երջանիկ էր: Բաւոր իւր սէրը գրած էր այդ մանկան վրայ, և իբր ճշմարիտ մայր՝ կը սիրէր զնա և կը գուրգուրար վրան:

Հուռնելիա անտառակին մէջ հասնելով՝ աչք մի տուաւ, սակայն առանց փաբիոյան տեսնելու: Տեղն զգալիկ էր, ամէն կողմ պարտեցաւ՝ առանց իւր փոքրիկ բարեկամ մուհին գտնելու: Պալատը վերադառնալու վրայ էր, բայց ինչ գեղեցիկ առաւօտ, ինչ

պիտի անոյշ օդ, որ կարծես իւր սրտին վրայ մեղմացուցիչ սպեղանի մի դրին: Մտասկայ կաղնոյ մի ճիւղին վրայ սարեկ մի կ'երգէր. ծառին ստորոտը նստաւ՝ մտիկ ընելու համար, բայց թռչունն սարսափած՝ բացաւ թևերը և փախաւ:

— Խեղճ թռչնիկ, ճերմակ զգեստս վախցուց զքեզ, մրմնեց վետտայի կոյսն՝ ետևէն նայելով:

Յետոյ սկսաւ քայլել, մերթ ընդ մերթ կանգ առնելով՝ ծառոց շուքին մէջ անած մանիակները քաղելու համար: Երբ բաւական պարտեցաւ, պալատ գալով՝ փաթիւղայի սենեակը դիմեց: Գուռն բաց էր, և աղիկն այնքան խոր զբաղած էր՝ ոսկեայ շղթայով ձեռքը բռնած պղնձեայ փոքրիկ իր մը կապելու, որ շիմացաւ կուռնելիայի գալը:

— Այս ինչ մեծ զբաղումներ ունիս, սիրելի՛ փաթիւղա, ըսաւ կուռնելիա՝ յանկարծակի զնա զրկելով:

Փոքրիկ քրմուհին ի սկզբան պտտաց. բայց իւր բարեկամուհին ճանչնալով,

— Նայէ՛, ինչ գեղեցիկ բան է, ըսաւ, փոքրիկ շղթայն ցուցնելով, որուն ծայրէն թևաւոր օձ մի կախուած էր:

Քեզի համար մօրս գործերդինաց մէջ փնտոնցի զայս, և այս շղթայով կապեցի՝ որ բնաւ վրայէզ չի հեռացնես:

— Ինչո՞ւ կ'ուզես զրկել զքեզ ասկէ:

— Որովհետև անոր ազդեցութեամբ զերծ պիտի ըլլաս դժբաղդութիւններէ, ըսաւ փաթիւղա:

Եւ ծաւր դնելով՝ դժուարաւ նստեցուց զնա, որ շղթայն պարանոցը անցունէ:

— Շնորհակալ եմ, ըսաւ կուռնելիա՝ անոր ձեռքը համբուրելով:

Այս նուէրս զմեզ պիտի պահէ Գոմետիա, նոսի և Փլաւիայի չար դիտաւորութիւններէն, ըսաւ փորձուիս լրջօրէն:

— Ինչո՞ւ համար կայսեր չար դիտաւորութեանց վրայ կը խօսիս. ինչ կայ, հարցուց կուռնելիա յուզուելով:

— Ինչպէս ամէն մարդ՝ ես այլ իմ զազունիքներս ունիմ, ըսաւ փաթիւղա խորհրդաւոր եղանակաւ:

— Բացատրէ՛ միւսքդ, սիրեցեան՛ փա-

թիւղա, կը ինչո՞րմմ. խօսքերդ պիտի լուսաւորեն միւսքս, և կասկածներս պիտի փարսաին: Խօսէ՛, քոյր իմ, լուսթիւնդ կրնայ փնտասկար ըլլալ ինձ:

Փաթիւղա, զարմանալով իւր բարեկամուհւոյն յուզման վրայ, վար ցատկեց անկողնէն, և անոր ծնգաց վրայ նստելով՝ ըսաւ.

— Չո՞ւր տեղ կը խռովիս, իմս կուռնելիա, կը տեսնեմ որ ինձմէ աւելի վախկոտ ես: Մտիկ ըրէ, ըսաւ՝ շատ զոհ ըլլալով որ պատմելու բան մ'ունի. երէկ մինչ բացակայ էիր, մի՞նակ կը շըջիկ պալատան մէջ: Գործ մի շունչնալով, չէի գիտեր՝ ինչպէս անցնեմ ժամանակս. և մինչ այս և այն կողմ կը պարտէի, Փլաւիայի ննջարանը հասնելով լսեցի՛ որ անուսկ կու տային. հետաքրքրութենէ շարժած՝ կեցայ. և... խնդրեմ՝ դիս մի մեղադրեր, կիսաբաց դռնէն ներս նայելով, տեսայ բարձրահասակ կին մի, որ թիկունքը իմ կողմն զարձուցած ըլլալով, դեմքը չկրցար տեսնել:

« Ելայսն նոր նուէրներ պիտի մատուցանէ դիցունոյն՝ զկուռնելիա տեսնելու համար, կ'ուրեր նա առ Փլաւիա. դիտէ իւր գործերը, որպէս զի սահմանեալ վայրկենին կարենամ հարուածել զնա: Փլաւիա ժպտեցաւ ամփիթատորոնին վազերաց պէս, և պատասխանեց. « Վստան եղիր վրաս, ակնարկս պիտի թափանցէ մինչև իւր սրտին խորը »: Այն ժամանակ մտածեցի՛ թէ Փլաւիայի սիրտն աւելի չար էր քան իւր հետ խօսող սիկնոջ սիրաբ որ կ'ըսէր՝ թէ զքեզ պիտի հարուածէ. իբր թէ կրնար դպչիլ վետտեանի միութեան այս բժժանքը փնտոնցի՛ որ ասուղիւ լաւ պիտի պաշտպանէ »:

Կուռնելիա սարսուլով մտիկ ըրեր էր փաթիւղայի պատմածը. Ելայսեր նուիրման համար ունեցած կասկածն ստուգութեան փոխուեցաւ: Վհատութիւնն, որ կը յաճորդէ երկիւղին, պատեց իւր սիրաբ, և զլուրը մանկահասակ աղկան ուսին վրայ դնելով, անբեկ մրմնջեց.

— Ո՞վ ուրեմն ինձ խորհուրդ պիտի տայ: Վայրկեան մի լքեալ և թուլասիրտ մնաց յետոյ հպարտութեան փայլ մի աւելի գեղեցկացուց զինքը: Իւր բարուց ազնուակա-

նութիւնն և ուժգնութիւնն, որ այնչափ մեղմ էին սովորական ժամանակ, արժնցան իւր մէջ, իրեն այնպիսի քաջարտութիւն մի ազգելով՝ որուն ինքն ալ չէր յուսար: Մէկ կողմ հրելով զՓարբոյս որ զորովանօք զինքը գրկած էր, խաչաձև դրաւ ձեռքերը կուրծքին վրայ, և ծանր և հնչուն ձայնով գոչեց.

— Չիս շրջապատող զարաններն իմ դէմ անգոր պիտի ըլլան: Գոմեփաննոս բռնաւոր մ'է, որուն առջև ամէն ոք կը խոնարհի. բայց ես հռովմայեցի եմ, և սրտիս մէջ նախնեացս արժանի սիրտ մի կը բաբախէ... Երբ ստոյգ վտանգ մի սպառնայ ինձ, ծեփակուտին պիտի չի գիմեմ, որովհետև արդի վառվարացած սինկրիտոսք ալ իրենց հարց չեն նմանիր. ժողովրդեան պիտի դիմեմ, և վտահ եմ որ նա պիտի կանգնի վետառայի քրմուհին պաշտպանելու համար:

Այս խօսքերս ըսելու ժամանակ Կոռնեն լիայի աչերն բարկութեամբ կը վառէին. իւր սովորաբար սոճոյն դէմքն թեթև մի կարմրած էր. իւր ճերմակ զգեստներով կը նմանէր մարգարէական ոգւով լեցուած սիրելիւայի մի: Երբ խռովութիւնն վայրկեան մի դարգեցաւ, հանգարտութեամբ նստաւ անկողնոյն վրայ և ըսաւ Փարբոյսի.

— Կը զարմանամ թէ Գոմիտիլլա ինչո՞ւ այսպէս աշացաւ. խոստացեր էր այս առաւօտ գալ:

— Գուցէ գիշերը վրայ հասնելէն վերջը գայ:

— Անկարելի է, որովհետև իւր հետ պիտի բերէ պատկառելի ծերունի մի որ ճանչած է զմայրս. և զու գիտես որ արևուն մըտնելէն վերջ արգելուած է արանց սրբավայրերս ոտք կոխել:

— Կ'ուզե՞ս երթամ նայիմ թէ կու գան արդեօք:

Կոռնենիս ընդունեցաւ Փարբոյսի առաջարկութիւնը, և իւր նմարանը գնաց, որովհետև պէտք կը զգայր առանձին խորհելու:

Վետտեան կուսանաց Կնճարանն ամենեւին չէր նմաներ արդի քրիստոնեայ կուսանի մի խցկան: Փոքրիկ սենեակ մ'էր այն, որուն սպիտակ յատակն զարգարուած

էր մանր քառակուսի քարերէ շինուած գունազոյն թռչուններով: Կամարակայ կնածեի ձեռունն պնած էր օսկեզօծ ապակիներէ յօրինուած ամենաչքնազ արարացի զարդերով: Պատերն բաց զօրազոյն էին: Տեղ տեղ զետեղուած կային իբր զարդ՝ միջակ բարձրութեամբ քառակուսի կնեայ սեղաններ: Իսկ կարասիքն էին մի անկողին, զահաւորակ մի, տեսակ մի բարձր և նեղ դարան, որուն զուններն արծաթազարդ սև փայտէ էին, փղոսկրեայ խորքանդակ փորձիկ արձաններով, և բազնաձև սեղան մի՝ որուն վրայ կային ետրուրական անօթ մի և երկու պղնձի կուռքեր:

Կոռնենիս նստաւ մտախոհ. բայց իւր մտածութիւններն իսկայն ընդհատեցան Փարբոյսի ներս վազելուն, որ ըսաւ.

— Գեղեցիկ տիկին մի և այլևոր ծերունի մի գաւթէն անցնելով՝ դէպ այս կողմ կու գան:

Այս խօսքերս ըսելէ վերջ հեռացաւ, և Գոմիտիլլա ու Անիկետոս վետտեանի սենեակը մտան: Ուրախութեան փայլ մի լուսաւորեց Կոռնենիայի սոճոյն ճակատը. շուտով մտեցաւ անոնց նազելի կերպով մի որ նստին, և Սեքստոս Սարինոսի վրայ տեղեկութիւն հարցուց:

Գոմիտիլլա պատասխանեց՝ թէ երիտասարդ պատրիկն լաւ գիշեր մ'անցուցած էր Փլաւիոս Եղեմեայի հսկողութեան ներքև. յետոյ խօսքը կայսեր վրայ դարձուց, և զարմացաւ՝ անոր անտարբերութիւնը տեսնելով:

— Պատմածներս անկարելի կ'երևին քեզ, ինձ շեռ հաւատար, ըսաւ յանկարծակի:

— Կը հաւատամ, օսկայն առանց վախելու. նուիրականն Աթենաս պաշտպան կը կանչին քրմուհոյն, և ամբողջ Հռոմ պիտի ելնէ անոր դէմ՝ որ շյարգէ զնա:

— Չգոյշ կեցիր, աղջիկ, վրայ բերաւ Անիկետոս, Գոմեփաննոսի ձեռքէն ամէն բան կու գայ. և իբր քրմայեա, կրնայ տաճար գալ երբ և ուզէ: Չգոյշ կեցիր, կ'ըսեմ, օւշարկութիւն բրէ նմարանիդ մէջ, անտառին և ճաշարանի մէջ, զգուշացի՛ր ընկերուհինքըդ: Կասկածառութիւնն լաւ բան չէ, բայց

կան պարագայներ՝ յորս պարտաւորուած ենք հետեւի անոր :

— Բայց այդպիսի կեանք մի անտանելի կը գտնայ ինձ, գոեց Վեռտանան :

— Բռնաւորաց քմահանդիսներն փոփոխական են. սա այնչափ երկայն պիտի շտեկ : Սակայն քաջալերուէ և բանէ մի՛ վախեր, որովհետև մայրդ կ'ազօթէ քեզ համար :

— Ո՞վ ես դու ուրեմն՝ որ միշտ մօրս վրայ կը խօսիս, ս'ըր ճանչցար զնա :

Անիկեանոս գլուխը ծռեց, և իւր գէմքն, որ միշտ հանգարտ էր, վշտալից երևայթ մ'առաւ :

— Շատ քիչ անգամ՝ և միշտ վշտօք կը յիշեմ մանկութեանս օրերը, պատասխանեց նա տխուր ձայնիւ. բայց երկիւղած մարդոյն սիրտն պիտի չընկնի ոչ ցտերէ և ոչ ալ ուրախութենէ. և եթէ կը փափագիս, այն անցեալ ժամանակին վրայ կը խօսիմ քեզ : Մտիկ բրէ ուրեմն : Ես զաւակ եմ թեթևազէն հեռեակ գիշուորի մի, որ ընկաւ պատերազմի գաշափ վրայ՝ Պոմպէոս վճռաւորս կտրին տրիբունին քով, որ քու մօրդ հայրն էր, և պատերազմեցաւ խուժաղուժ ազգաց զէմ. քրքոս հետ սնայ փաստողայի տան մէջ : Ես աւելի մեծ ըլլալով քան զնա, կը հսկէի անոր խոզերուն վրայ և տեսնելով անոր պարզասալը շնորձք և զեղեցկութեամբ, աղայական մտքովս զնա Անահտայ՝ զգաստ զիցուհոյն կը նմանցնէի : Շատ շուտով անցան այն երթանիկ օրերն, ժամանակն արագութեամբ սահեցաւ, և անոր անողօքելի անիւն ամեն բան ջարդուրդ ըրաւ իւր ետեւէն : մօրդ մանկութեան տարիներն այլ անցան. և երբ քսան տարեկան եղաւ, փլաւիտ Սարկիսոսի հետ : Քոյրս այլ ամուսնացաւ, և զնայ փաւստողայի հետ անոր ամուսնոյն տունը՝ ուր ծնաւ զՓրոնտիս խաղակիցդ :

Այս միջոցին իմ մանկութեան բարեբարս Պոմպէոս վճռաւորս մեռաւ. և ինձ առանց իրեն Հոռով՝ բնակելն անտանեղի ըլլալով, նաւեցի Պաղեստին և թեթևազէն գիշուոր եղայ : Վեպասարիանոս պաշարած էր այն մեզ պարտ քաղաքը, որուն համար ըսած էր Բարձրեան՝ թէ քար քարի վրայ պիտի չի

մնայ : Իւր հրամանաց ներքև կուեցայ. այն ժամանակ կուպաշտ էի, բայց հարցս կրօնքն կը ցամբեցնէր զհոգիս, և կը ջլատէր կաթողութիւններս անձկութեամբք և տագնապով : Սիրտս պէտք կը զգար սլանալու առ գերադոյն էակ մի, որ առ ինքն կը ձգէր զիս գաղտնի ազդեցութեամբ մի, և թոյլ չէր տար որ կուպաշտութեան ամօթալից նիւթականութեան մէջ խաղաղութիւն գտնեմ : Լսած էի շատ բաներ այն Աստուծմէ զըրկուածին վրայ՝ որ զարմացուցած էր զՀրէաստան իւր խօսքերով. գիտէի որ կուպաշտք ծաղր կ'ընէին զնա և Հրէայք կ'ուրանային անոր աստուծաւորութիւնը : Բայց այս ուրացունն ուրիշ բաներու հետ զիս համոզեցին այն նորաբանչ անձին ամենակարողութեան վրայ. վասն զի այդ մերժումն յառաջ կու գար անոց ունեցած երկիւղէն՝ որ չըլլայ թէ մարգարէութիւնք հաստատեն թէ նա փրկիչն է : Պաշարման ժամանակ երբայեցի բարունայ մի հետ ծանօթացայ, որ իւր կրօնքը սովորեցուց ինձ : Օր մի Նազովիցեոյն վրայ իւր կարծիքը հարցուցի. լսեց, խօրհեցաւ պահ մի և ըսաւ .

— Այն մարդն անուշտ Աստուած էր, որովհետև Աստուած միայն կարող էր ընել ինչ որ նա բրաւ :

— Ուրեմն քրիստոնեանց ես, հարցուցի :

— Ո՛չ, ըսաւ, մկրտութեան սուրբ ջուրն չէ հոսած նակախ վրայ. մինչև հիմակ աչերս գոցած էի լուսոյն զէմ, յամուսնեաց իմ մտքէս վեր եղած փաստերուն առջև. բայց երկնից բարկութիւնն ծանրանալով աստուածասպան քաղաքին վրայ, միտքս լուսաւորեցայլ չեմ տարակուսիր, կը հաւատամ, և քիչ ատենէն քրիստոնեայ կ'ըլլամ :

Բարունայն խօսքերն հոգեոյս ազդեցին. Քրիստոսի կրօնքը սուրած էր նա, իրեն աշակերտեցայ. և երբ Հոռով գարձայ, հաւտացի անոր որ ըսաւ. « Բարիք բրէք զձեզ ատողներուն, աղօթեցէք զձեզ հալածողներուն համար » : Կը հաւատայի անոր, որովհետև այսպիսի վարդապետութեան մի տարածումն Աստուծոյ գործ միայն կրնար ըլլալ :

— Ուրեմն դու քրիստոնեայ ես, և յանպրզնեցար ոտքդ վեպասայի պալատան սեմէն

ներս գնել, ըստ կուռնելիա՝ բարկութեամբ ոտքի ելնելով:

— Այո՞, քրիստոնեայ քահանայ մ'եմ, պատասխանեց ծերունին հրեշտակային ուրախութեամբ:

Յետոյ առաջ սարաւ:

— Հոովմ գալուս պէտ կրօնակից եղբայրներս փնտնեցի, որք շատ չէին հայածուբ վեպպահանոսի կայսերութեան ժամանակ. և երկու տարի փորձելէ յետոյ՝ Պետրոսի յաջորդն լինոս զիս քահանայ ձեռնադրեց:

— Հեռացիր ասկէց, և մի պղծեր ներկայութեամբ աստուածուհւոյն սիրելի յարկը, գոչեց դարձեալ կուռնելիս:

— Մի արհամարհեր գրքիստոնեայս, ս'իզուստր իմ, ըստ ծերունին հանգարտութեամբ, որովհետև մայրդ քրիստոնեայ մեռաւ, և իւր վերջին խօսքը մաղթանք մ'էր որ զու այլ իրեն հետևիս:

— Կը ստես, ծեր, գոչեց քրմուհին՝ բարկութենէ տօգունելով:

— Ո՛չ, զաակա, որովհետև Աստուած յայտնի պատուիրանաւ կ'արգելու մեզ ստելմայրդ քրիստոնեայ մեռաւ: Երբ վերագարձին զինքը տեսայ, իւր սիրտն պատրաստ էր ճշմարտութեան սուրբ սերմը ընդունելու. իմ խօսքերս զինքն զարձուցին, և երբ տեսաւ զքեզ աստուածուհւոյն պաշտման նուիրուած, սրտին ցաւն կամաց կամաց մեռաց զինքն:

Հեռացիր, կը հրամայեմ, և մի մութ քսեր փաւստոյայի յիշատակին, եթէ չես ուզեր՝ որ քեզմէ վրէժ խնդրեմ, գոչեց կուռնելիս ծերունւոյն՝ դուռը մասնանիչ ընելով:

— Կը ցաւիմ վրագ, դուստր փաւստոլայի, և կը ներեմ՝ քեզ, ըստ Անիկետոս՝ ապրի ելնելով և կարեկցաբար նայելով զայրացած վեստեանին տօգոյն երեսը: Եթէ ծերունւոյ մի խրատուց կարօտիս, առնս գիտես: Բայց աղօթքներս առաւօտ և երեկոյ պիտի սլաննիս առ Ամենակալն՝ քեզ համար հաւատոց շնորհքը խնդրելու:

— Սպասէ՛ վայրկեան մի, Անիկետոս, հետդ կու գամ, ըստ Գովիտիլլա:

— Ինչո՞ւ այսպէս շուտ կը մեկնիս, հարցուց կուռնելիս:

— Որովհետև ես այլ քրիստոնեայ եմ, գԱնիկետոս մերժելով՝ զիս ալ մերժած եղար, պատասխանեց տիկինն վեռութեամբ:

Առաջին անգամն էր որ հոովմայեցի հեւպատոսին կինն իւր հուսառքը կը յայտնէր. նախասինք կը համարէր զայն ծածուկ պահել, երբ քրիստոնեայ քահանայն իրենը յայտնելով՝ ինք զինքը նախատանաց՝ և նոյն իսկ վռնագի կ'ենթարկէր, որովհետև կուռնելիս բարկութենէն կուրացած՝ կրնար մատնել զնա և կորսնցնել:

Գովիտիլլայի խոստովանութիւնը լսելով, քրմուհին զարմացման աղաղակ մ'արձըլեց, և դէմքը ծածկեց ձեռաց մէջ՝ որպէս զի աւոր Անիկետոսի հետ մեկնելը չի տեսնէ: Երբ առանձին մնաց, չկրցաւ այլ և զսպել զինքն և սկսաւ լալ. Գիրցաւ պաշտօնէին անորոքութիւնն և արժանապատուութիւնն իւր մտքին մէջ իրարու հակառակ բիւր խորհուրդներ կը յարուցանէին, և գրեթէ կը զըզլար զնա նախատելուն համար:

Այն ժամանակ բոլոր այս տխուր մտածումները փարատելու համար տաճար գնաց՝ զաստուածուհին պատուելու:

Հեթանոսաց աղօթքներն շատ տարօրինակ էին: Անոնց բոլոր կարեորութիւնն կը կայանար բաւերը ամենայն ճշդութեամբ արտասանելուն մէջ: Աղօթողն իւր ըսածէն բոլորովին տարբեր բաներու վրայ կրնար մտածել. բայց ըստ իրենց համոզման՝ արտասասանութեան փոքրիկ սխալ մի՛ ՚ի դերև կը հանէր աղօթքը: Կայսերք, և յաճախ պատրիկներն իսկ՝ չսխալելու համար անհեթեթ հնարք մի գտած էին, ինչպէս Պլինիոս կը պատմէ մեզ: Քուրմ մի իրենց առջև աղօթքը կը կարգար, ուրիշ մի ասոր բրած սխալները կ'ուղղէր, և երբորդ մ'այլ սրինգ կը զարնէր, որպէս զի աղօթողն միայն զօրձուոյն խառնաշփոթ ձայնը լսէ:

Կուռնելիս տաճարը մտաւ, և առանց բառ մի ըսելու սրբազան կրակին վրայ հրակողին՝ բազմին մօտեցաւ, աչբըր աստուածուհւոյն վրայ սեեռած: Երբ աւարտեց խընդրուածքը, իւր աջ ձեռքը համբուրեց և աջէն դէպ ի ձախ շրջան մ'ըրաւ՝ Նումա Պոմպիլիոսի դրած արարողութեան համեմատ,

այսպէս ձևացնելով արևուն շրջանը երկրիս շուրջը՝ ըստ աստղաբաշխական կարծեաց այն ժամանակին։ Ետոյ նստաւ, ցուցնելու համար իւր վստահութիւնը առ աստուածունհին մատուցած աղօթից կատարման վրայ։ Այս արարողութեանէն վերջ ելաւ տաճարէն և փաբիւլայի ննջարանը գնաց, ուր մինչև քնանալու ժամը կեցաւ։ Յետոյ իւր սենեակը դարձաւ, որովհետև գիշերն հառած էր։ Պառկելէն առաջ անգամ մ'այլ անտառակը գնաց, յուսալով իւր բորբոքող ձակտին համար գիշերուան սիւքին մէջ զովութիւն մի գտնել։

Խոր լուսութիւն էր նուիրական շրջափակին մէջ. կը լսուէր միայն աշնան հովէն մղուած չոր տերևներուն քոտափիւնը։ Թափանցիկ ամպ մի կը ծածկէր երկնից կամարը և աստեղաց պայծառութիւնը։ Մերթ ընդ մերթ՝ կազնեաց զագաթը թառած բուխճակներուն տաղտկալի և սղբական երգն գիշերուան խաղաղութիւնը կը վրդուէր։ Տխուր գիշեր մ'էր, ինչպէս նաւասուոյն հրածեշտի ողջոյնն. և կուռնելիա ոչ բուին ուշ կը գնէր և ոչ այլ չորցած տերևներուն՝ զորտ կը կոխուէր. մի և նոյն դառն և վշտալից մտածութիւնն պատած էր իւր միտքը։

Երբ քայլելէ յոգնեցաւ, նստաւ, երկինք նայեցաւ և 'ի զուր փնտռեց իւր սիրած աստղը։ Այն ժամանակ խոնարհեց գլուխը և

կաթիլ մի կսկծիչ արսօտը գլորեցաւ իւր այտից վրայ. աշխարհն անապատ կը թուէր իրեն, և այս գիշերուան խորհրդաւոր տխրութիւնն իւր կենաց պատկերն էր կարծես։

Յանկարծ Երուսելիա սարսափած՝ իւր շուրջը նայեցաւ. կարծես՝ իւր ականջին ցաւագին և հեղձամղձուկ հառաչ մի եկած էր։ Իսկոյն յիշեց Անիկետոսի բառերը, արագ ոտքի ելաւ և ուզեց փախչիլ. բայց իւր թիկնոցին ծայրն թփի մի ճղին անցաւ։ Սարսափն աւելցաւ, ուզեց աղաղակել, ձայնը խղղուեցաւ։ Վերջապէս ազատեցաւ թիկնոցին ծայրը, և նա արագութեամբ կրցաւ փախչիլ զէպ ի տաճարը, ինչպէս նապաստակ մի որսորդէն հալածուած։

Նոյն վայրկենին մարդ մի ելաւ մացառներէն, և նայելով այն ճերմակ ուրուականին՝ որ մօտ էր աներևութանալու գիշերուան մթութեան մէջ, ըսաւ յուզեալ և ցած ձայնով.

— Մի՛ փախչիր, պաշտպանդ կը հսկէ քու վրայ... Չքեզ ազատելու համար՝ անգութ և նախատական մահուան կը մատնեմ գիս։

Եւ Պարիս սուսերամարտն անցաւ անտառակէն, վայրի կասուի ճարպկութեամբ շքրջափակի պատէն զուր ցատկեց և դարձաւ ամփիթատոն՝ իւր բնակարանը։

Շարայարելի

